ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 մայիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

62
(2912)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԻՆ Է ՄՈՏԵՆՈՒՄ

ՀՀ Քննչական կոմիտեն էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանի դեմ հարուցված քրեական գործով ավարտական փուլի մեջ է գտնվում, եւ դատելով իրավիճակից՝ առաջիկայում գործով նախաքննության ավարտ կհայտարարվի: Հիշեցնենք, որ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սիներջիի» վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել, եւ նա փետրվարի 16-ից գտնվում է տնային կալանքի տակ: Բանն այն է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայության ձեռքբերման մրցույթի ընթացքում կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով, քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ: Մասնավորապես՝ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ՝նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ՝ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով ընկերությանը հեռացնել մրցույթից: Սույն քրեական գործով մեղադրյալ են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝Անի Գեւորգյանը, «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը եւ այլ անձինք:

Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ սրբազան Գալստանյանի առաջնորդած շարժման երթը դեպի Երեւան իրավապահ համակարգում որոշակի գործընթացների կասեցման պատճառ է դարձել: Մասնավորապես, մեզ հասած լուրերի համաձայն՝ մի շարք քրեական վարույթներով անցնող անձանց ներքին կարգով հասկացրել են, որ մի փոքր սպասեն իրենց քրեական վարույթների հարցով, մինչեւ հասկանան՝ երթը գա, հասնի Երեւան, ի՞նչ իրավիճակ է լինելու, որից հետո պարզ կլինի ընթացքը: Դատելով իրավիճակից՝ իրավապահ համակարգում մտավախություններ կան, որ, միգուցե, երթը հասնի Երեւան, ու իրավապահ համակարգում գործընթացներ սկսվեն. ուստի արդեն իսկ առկա քրեական վարույթներով նոր նախաձեռնություններ անելու ժամանակը չէ:



ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների ու աշխատանքի բյուրոյի կողմից հրապարակված զեկույցում ասվում է. «Կառավարության կամ վերջինիս գործակալների կողմից կամայական կամ անօրինական, այդ թվում՝ արտադատական սպանություններ կատարելու վերաբերյալ հաղորդումներ չեն եղել: Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) մտահոգություններ են հայտնել զինված ուժերում գրանցված ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերի ու իրավապահների կողմից այդ դեպքերով արժանահավատ քննություններ չապահովելու վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունում ոչ մարտական, խաղաղ պայմաններում 2018-ին գրանցվել է մահվան 36 դեպք, 2019-ին՝32, 2020-ին՝46, 2021-ին՝42, 2022-ին՝38, իսկ 2023-ին՝53 մահվան դեպք: 2024 թվականի առաջին 5 ամիսներին զոհերի թիվը հատում է 30-ի սահմանը: Այս դեպքերն արձանագրվել են, երբ զինվորը զոհվել է արտակարգ իրավիճակների պատճառով, օրինակ՝ ձնաբքի, երբ զոհվել է ավտովթարից, զինակցի կրակոցից, Ազատ գյուղի դեպքում՝ կացարանի հրդեհից: Դեպքերը տարեցտարի ավելանում են: Չեն նվազում՝ «պահելով» մահվան ստաբիլ ցուցանիշներ: Պաշտպանության նախարարությունը ակներեւ ոչ մի քայլ չի ձեռնարկում՝ այս թվերը չեզոքացնելու կամ պակասեցնելու համար». - գրված է ԱՄՆ պետքարտուղարության զեկույցում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ըստ նախնական վարկածի՝ պայմանագրային զինծառայողը, որի դին գտնելու մասին հայտնել էին երեկ, ինքնասպան է եղել: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ այս քայլին գնալու պատճառը նրա սոցիալական վիճակն է եղել: Իրավապահ համակարգում առկա լուրերի համաձայն՝ նա շատ պարտքեր է ունեցել: Որքանով՝ են այս վարկածները հիմնավոր՝ ցույց կտա քննությունը: Ի դեպ, նա ամուսնացած էր եւ իր խնամքի տակ ուներ երեխաներ: Նշենք, որ մայիսի 7-ին՝ժամը 14:00-ի սահմաններում, ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում հայտնաբերվել է պայմանագրային զինծառայող Արտակ Սերյոժայի Ավալյանի (ծնվ. 1985 թ.) դին՝հրազենային վնասվածքով: Ընթանում է քննություն՝դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով:



ԶՐՈՒՅՑ

ՏԱՎՈՒՇԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԻՄԱՍՏՈՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԹԻԿՈՒՆՔՆ Է

Երկրում առկա իրավիճակը սրվում է: Մայիսի 4-ին Տավուշից մեկնարկել է «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը, որը գլխավորում են Հայ Առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանն ու քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը:

Իշխանությունն արդեն քանի օր է՝ փորձում է հնարավոր բոլոր միջոցներով վարկաբեկել շարժման առաջնորդներին, հնարավորինս ետ պահել ժողովրդին՝ շարժմանը միանալուց:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Անի Սամսոնյանի հետ:

-Գաղտնիք չէ, որ աջակցում եք շարժմանը, երբ հայտարարություն արեցիք՝ ասելով. «Սրբազան, Ձեզ սպասում ենք Երեւանում», Ձեզ թիրախավորեցին: Ինչո՞ւ թիրախավորվեց Ձեր կողմից արված արտահայտությունը:

-Քանի որ զբաղվում եմ քաղաքականությամբ, դա նորմալ եմ համարում, սակայն Հայաստանում կան քաղաքական շրջանակներ, որոնց թվում է, որ միայն իրենք կարող են զբաղվել քաղաքականությամբ, ինչը առողջ քաղաքական միջավայրին հատուկ վերաբերմունք չէ:

-Շատերը քննադատեցին՝ նշելով, որ շարժմանն աջակցություն եք հայտնել, քանի որ հեղափոխության ակնկալիք ունեք:

-Հնարավոր է՝նման ուժեր եւ քաղաքական գործիչներ կան, որոնք փորձում են իրենց ձեռքերը «տաքացնել» այս շարժման վրա, սակայն իմ եւ գործընկերներիս աջակցությունը շատ պարզ է: Մենք սրբազանին էլ ենք հայտնել, որ կիսում ենք իրենց մտահոգությունը, եւ բնական է, որ պիտի աջակցենք շարժմանը: Սահմանազատման այս գործընթացը, որը հանուն խաղաղության է կոչվում, սակայն սպառնալիք է մեր ժողովրդի համար, պետք է վերանայվի: Իշխանությունը փորձում է ներկայացնել, որ մի փոքր գյուղի ու համայնքի ժողովուրդ պատերազմ է պարտադրում մի ամբողջ ժողովրդի՝ խաբելով այն մարդկանց, ովքեր չգիտեն, թե իրականում մարզերում ինչ է կատարվում: Մամուլին հետեւելով՝ տպավորություն է, որ մի խումբ մարդիկ Տավուշից քայլում են Երեւան եւ պատերազմ են պարտադրում. սրա նպատակը իրական պահանջը նսեմացնելն ու շարժման թափը կոտրելն է:

-Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ սահմանազատումը սկսվեց հենց Տավուշից:

-Տավուշը միշտ եղել է մեր պաշտպանական ամուր դիրքերից մեկը: Մենք այնտեղ մեր պաշտպանական, անվտանգային եւ ռազմական ենթակառուցվածքների առումով մեզ վստահ ենք զգացել, քանի որ ունեցել ենք լավ դիրքեր: Ադրբեջանը խնդիր է դրել, որ Հայաստանը առհասարակ բանակ չունենա, հետեւաբար՝ այս գործընթացը ենթադրելի էր: Տավուշը ռազմական իմաստով Սյունիքի թիկունքն է: Սյունիքը միշտ թիրախ է եղել, քանի որ Ադրբեջանը ուզում է միջանցք, ինչի համար պատրաստ է ամեն քայլի: Եվ, բնականաբար, երբ բանը հասնի իրականում միջանցքը ստանալուն՝ Սյունիքի թիկունքը պետք է բաց մնա:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 204

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍՈՎ ՈՉԻՆՉ ՉԻ ԱՐՎՈՒՄ

07.06.2018 թվականին ՀՀ Ազգային ժողովում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Մենք շարունակելու ենք ջանքեր գործադրել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ՝ միեւնույն ժամանակ պատրաստ լինելով Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել առանց նախադայմանների»:

Այնուհետեւ՝հաջորդ տարում՝07.03.2019 թվականին՝ՀՀ ԱԳՆ-ում դիվանագետների օրվան նվիրված միջոցառման ժամանակ, վերահաստատեց. «Մենք պետք է շարունակենք նաեւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քաղաքականությունը: Մենք հստակ արձանագրում ենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը գլոբալ անվտանգության եւ ցեղասպանությունների կանխարգելման ուղղությամբ մեր կարեւոր ներդրումն է, եւ մենք այդ հարցը դիտարկում ենք այս տեսանկյունից»:

Սակայն, իրականում, «Ժողովուրդ» օրաթերթը անհրաժեշտ է համարում հիշեցնել, որ 2018 թվականից ի վեր ընդունվել է Հայոց ցեղասպանության ճանաչման ընդամենը 3 բանաձեւ՝ հետեւյալ պետությունների կողմից.

26.04.2019թ. Պորտուգալիայի խորհրդարան

30.10.2019թ., 12.12.2019թ., ԱՄՆ Ներկայացուցիչների պալատ եւ ԱՄՆ սենատ

06.05.2021թ. Լատվիայի Հանրապետության խորհրդարան

08.02.2023թ. Մեքսիկայի Սենատի հռչակագիր

2022 թվականի հունվարի 24-ի առցանց մամուլի ասուլիսի ընթացքում Նիկոլ Փաշինյանը նշեց, թե Հայաստանի Հանրապետությունը երբեք Հայ դատի քաղաքականություն չի վարել՝պատասխանելով հարցին, թե հնարավո՞ր է արդյոք, որ Հայաստանը հրաժարվի Հայ դատից եւ սառեցնի համահայկական օրակարգի թեմաները՝ ընդառաջելով թուրքական նախապայմաններին: «Պետք է արձանագրենք, որ Ցեղասպանության ճանաչման գործընթացի լոկոմոտիվը միշտ էլ եղել է սփյուռքն ու սփյուռքի կազմակերպությունները», - նշեց նա:

Իսկ այս տարվա՝24.04.2024-ի ուղերձում ոչ մի խոսք արդեն չկար ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերի մասին: Այսինքն՝Նիկոլ Փաշինյանը խաբել է:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՌԱՑԵԼ Է ՌԴ-ԻՑ

Ռուսաստանի Դաշնության նախագահի օգնական Յուրի Ուշակովը հայտարարել է, որ Երեւանը դե ֆակտո սառեցրել է իր մասնակցությունը կազմակերպությունում, թեեւ դեռ դուրս չի եկել դրանից, միեւնույն ժամանակ չի մասնակցում կառույցի համատեղ զորավարժություններին եւ պատրաստվում է ձեռնպահ մնալ դրա ֆինանսավորումից:

«Զուգահեռաբար, Հայաստանը ցուցադրաբար երկխոսություն է զարգացնում Արեւմուտքի հետ՝ ներառյալ դիտարկում է Եվրամիությանն անդամակցելու տարբեր տարբերակներ, ակտիվանում են ՆԱՏՕ-ի հետ կապերը: Այժմ շատ հարցեր են կուտակվել, որ քննարկում են պահանջում հենց առաջնորդներից»,- հավելել է Յուրի Ուշակովը:

ArmLur.am-ը կապ հաստատեց քաղաքագետ Ստեփան Դանիելյանի հետ, հասկանալու համար՝ ի՞նչն է Հայաստանի՝ նման քաղաքականության պատճառը: «Խնդիրը բավականին պարզ է՝ աշխարհաքաղաքական պայքար է գնում: Հայաստանյան քաղաքականությունը գտնվում է արտաքին ազդեցության տակ. ցանկանում են Ռուսաստանին հեռացնել տարածաշրջանից, դրա համար էլ զոհաբերվեց նաեւ Արցախը: Այսինքն՝ կարող էր այլ տարբերակ լինել, այլ տարածքներ զիջվեին, բայց այս վիճակը չլիներ, սակայն ինքը գնաց հանուն վերոնշյալ նպատակի, որ իր առջեւ դրել էին:

Հիմա նաեւ այլ հարց է առաջանում՝ իսկ Իրանի հետ ո՞նց են լինելու հարաբերությունները: Ըստ էության, ինքը գտնվում է թուրք-ադրբեջանական վերահսկողության տակ, ի դեմս Արեւմուտքի՝ մենք թշնամանում ենք առաջին հերթին Իրանի հետ, որը մեզ համար գերկարեւոր գործընկեր է, որի շնորհիվ Սյունիքը այսօր չի գրավվել Ադրբեջանի կողմից: Հիմա նրա գլխում ի՞նչ երաշխիքներ կան՝ դժվար է ասելը, բայց հստակ է, որ Արեւմուտքից Հայաստանին երաշխիքներ չեն տալիս»:

Հիշեցնենք, որ. «Նիկոլ Փաշինյանը չի մասնակցի մայիսի 9-ին Մոսկվայում կայանալիք Հաղթանակի շքերթին». - ասել է ՌԴ նախագահի օգնական Յուրի Ուշակովը:

Ուշակովը հայտնել է, որ Նիկոլ Փաշինյանը մայիսի 8-ին կայցելի Մոսկվա եւ երկկողմ հանդիպում կունենա ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Փաշինյանը կնախագահի Եվրասիական տնտեսական միության գագաթնաժողովը, որը կկայանա նույն օրը:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՄՏԵԼ Է ՈՒԺԻ ՄԵՋ

Վավերացման եզրափակիչ փուլերի ավարտից հետո ուժի մեջ է մտել Եվրամիության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ՝ Հայաստանի Հանրապետությունում ԵՄ քաղաքացիական դիտորդական առաքելության կարգավիճակի մասին համաձայնագիրը:

Այդ մասին հայտնել են Հայաստանում ԵՄ առաքելությունից:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԽՍՀՄ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

«Ալմաթիի հռչակագիրը՝ որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման բազային սկզբունք, ընդունված է Հայաստանի եւ Ադրբեջանի կողմից, դա անշրջելի իրողություն է». - այսօր հրավիրված մամուլի ասուլիսին հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Սահմանազատումը տեղի է ունենում Խորհրդային Միության իրավաբանական ուժ ունեցող ամենավերջին քարտեզների հիման վրա: Մեզ համար կարեւոր է՝ Հայաստանի սահմանի պարագծի ամբողջական սահմանազատումն ապահովելուն միտված իրավական հիմքերի արտահայտումը: Օգտագործվում են քարտեզներ, որոնք արտահայտում են Խորհրդային Միության փլուզման պահին Խորհրդային Հայաստանի եւ Խորհրդային Ադրբեջանի միջեւ առկա սահմանները: Այս գործընթացը ունի մի նպատակ՝ անիմաստ դարձնել պատերազմը, այն զրկել տեղի ունենալու հիմքից: Այս պահի դրությամբ աշխատանքի 90 տոկոսը արված է, եւ ինչքան առաջ ենք գնում, համոզվում ենք, որ պատերազմը դառնում է անտրամաբանական». - ասաց վարչապետը:

Անդրադառնալով սահմանային սյուներին՝ Փաշինյանն ասաց. «Մենք գնացել ենք այդ սահմանային սյուները տեղադրելու ճանապարհով, որովհետեւ համարում ենք, որ դրանք տեղադրվում են իրավական հենքի վրա եւ դառնում են անվտանգային երաշխիք Ոսկեպարի, Կիրանցի, Բերքաբերի, Բաղանիսի եւ, ընդհանրապես՝ Հայաստանի Հանրապետության համար: Սահմանային սյուները անվտանգության երաշխիքի սյուներ են, անվտանգության սյուներ են»:

Ի՞ՆՉ ԵՆ ԱՆԵԼՈՒ ԷԿՈՊԱՐԵԿՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նորաստեղծ էկոպարեկային ծառայությունը 930 ռուլոն զուգարանի թուղթ է գնում, եւս 2 ռուլոն՝ թանկարժեք՝ հավանաբար ծառայության պետի եւ տեղակալի համար:

Առաջին հայացքից հարկատուների հաշվին անձնական հիգիենայի կարիքները բավարարելու՝ շրջակա միջավայրի նախարարության այս գնումը կարելի է մի կերպ հասկանալ: Բայց, երբ տեսնում ես, որ խոսքը նախկին 506 անտառապահի եւ 345 տեսուչի մասին է, հարց է առաջանում, իսկ այդ զուգարանի թուղթը ո՞ր-տեղ է կախված լինելու՝ անտառո՞ւմ թե՞ տնտեսվարողի հանքում, քանզի էկոպարեկային ծառայության աշխատակիցները բացառապես պետք է գտնվեն կա՛մ անտառներում կա՛մ երկրով մեկ գործող հանքերում՝ շուրջօրյա (Հակոբ Սիմիդյան 15 հունվար 2024թ.) իրականացնելով ընթացիկ հսկողություն:

ԻՆՔՆԱՄԱՔՐՈՒՄ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐԱԿԱՐԳ, ԲԱՅՑ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ

«Նիկոլ Փաշինյանը թող իր խոսացածն անի, նա խոսացել է ձեռքը կտրել, եթե Տավուշից գյուղեր տա». -այս մասին, երեկ՝ մայիսի 7-ին, լրագրողների հետ զրույցում ճշեց Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ Սրբազանը:

«Ես չեմ ուզում, որ այդպես վարվի, բայց ինքն է դա ասել: Եթե վարչապետն իր խոսքը չի կատարում, ո՞նց է մեզ կամ որեւէ մեկին մեղադրում ինչ-որ բաների մեջ:

Մենք ասել ենք՝ հաշտության օրակարգ, խաղաղության օրակարգ, հաղթանակած խաղաղության օրակարգ, ոչ թե ծնկաչոք: Ասել ենք՝ հոգեւոր մեղքից ազատագրության օրակարգ: Այս երթը ինքնամաքրվելու, ինքնաճանաչողության մասին է: Ինչո՞ւ են վախենում այդ մարդիկ. մենք գնում ենք ոտքով, ուխտի ենք գնում՝ ինքնամաքրվելով», - ասաց նա:

Հարցին՝ իշխանությունն իրենցից վախենո՞ւմ է, Բագրատ սրբազանը պատասխանեց. «Բա որ չեն վախենում, ինչո՞ւ են այդ մակարդակով մեզ մեղադրում, ինչի՞ մեջ են մեզ մեղադրում: Պատերազմ հրահրելո՞ւ: Ախր պատերազմի մունետիկը ինչպե՞ս կարող է պատերազմ հրահրելու մեջ մարդկանց մեղադրի: Իմ գործը քայլելն է, քարոզելը, խոսելը»:

Անդրադառնալով նրան, որ մարդիկ իրենից քաղաքական ակնկալիք ունեն, նա ասաց. «Բայց չէ որ մենք քաղաքականությամբ չենք զբաղվում: Ես քայլում եմ, հաշտության մասին եմ խոսում: Մենք իշխանություն ունե՞նք, որ իշխանափոխության պահանջ հնչի: Իշխանության գոյությունը պայմանավորված է երկրի անվտանգությամբ, բանակցությունների սեղանին ջանք ներդնել, որ երկիրն անվտանգ լինի, ճիշտ ճանապարհով գնանք, որ մարդիկ նվաստացած, ստորացած չլինեն, իրենց սրտով զգան այս երկրի տեր լինելը: Դա է իրենց սեպուհ պարտականությունը: Եթե անում են, լավ, եթե չեն անում, ուրեմն չկա. մի բան, որ չկա, ի՞նչը փոխես: Իշխանությունը ժողովրդի՞նը չէր, հիմա ժողովրդի՞ն են փոխելու: Ժողովուրդն ինչ կասի, դա էլ կանենք: Երեւի ինքը կգա, հրապարակում ելույթ կունենա, ինչպես խոստացել է, եւ կասի իր խոսքը:

Մենք ոչ մի ակնկալիք չունենք իրենից եւ որեւէ մեկից, ինքն է ասել՝ «ձեռքս կկտրեմ», ես հիշեցնում եմ, ասել է՝ կգամ, հրապարակում ելույթ կունենամ, դարձյալ հիշեցնում եմ. ես վատ բան չեմ ասում»:

Սրբազանը չհամաձայնեց Նիկոլ Փաշինյանի հայտարարությանը, թե իր՝ այսօրվա ասուլիսը եւս ելույթ է ժողովրդի հետ. «Ոչ դա ելույթ չէ, էկրանից այն կողմ, թիկնապահներով շրջապատված, դա ինչպե՞ս կարող է ելույթ համարվել: Եկել էր, ոսկեպարցիների վրա հոխորտում էր, Կիրանցի ժողովրդին խաբում էր...Մենք ասում ենք՝ պետք է ինքնամաքրվենք, մեղքերից ազատվենք, զղջանք ու ապաշխարենք»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

«ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ» ԱՆՕՐԻՆԱԿԱՆ Է». ԹԱԹՈՅԱՆ

ՀՀ իշխանությունների իրականացրած «սահմանազատումը» հակադրվում է երկրի շահերին, կրում է միանգամայն անօրինական բնույթ, չի համապատասխանում ոչ մի միջազգային նորմի, խախտում է Հայաստանի անվտանգության համակարգը: Այս մասին հայտնել է ՀՀ նախկին օմբուդսմեն Արման Թաթոյանը լրագրողների հետ զրույցում, դեպի Երեւան բողոքի երթի ժամանակ:

Թաթոյանը նորից ընդգծել է սահմանազատման հանձնաժողովների գործունեության անօրինական բնույթը, դրա համար ոչ մի օրինական հիմք չկա:

«Տպավորություն է ստեղծվում, որ տեղի է ունենում օրինական սահմանազատում: Դրա համար էլ երկրները եւ կազմակերպությունները ողջունում են: Անգամ ասում են, որ դա տեղի է ունենում պայմանագրի հիման վրա: Իրականում ոչ մի պայմանագիր էլ չկա. այդ մասին են խոսում պաշտոնական հաղորդագրությունները: Սկսվել է շատ վտանգավոր գործընթաց ՀԱԵ-ի նկատմամբ, հարձակումներ եկեղեցու եւ անձամբ արքեպիսկոպոս Բագրատ Գալստանյանի դեմ: Բացի այն, որ այդ փորձերը ընկնում են իրենց իսկ ընդունած ՔՕ-ի տակ, դրանք սասանում են մեր պետության հիմքերից մեկը՝ ՀԱԵ-ն», - ընդգծել է Թաթոյանը՝ ավելացնելով, որ այս երթը մարդկանց պայքարն է՝ հանուն իրենց տանն ապրելու:

ԱՌԱՋԻԿԱ ՆԻՍՏԵՐ

Կառավարության առաջիկա նիստերից մեկում կընդունենք արցախցիներին բնակարանների ապահովման ծրագիրը: Այս մասին երեկ՝ մայիսի 7-ին, հրավիրված մամուլի ասուլին ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է Տավուշի համար քայլերթ իրականացնողներին՝ նշելով՝ ինչպես կարող է տաճարը հաղթել փողոցին:

Նա հարց տվեց, թե. «Կանգառը փակելու ենք, մոմավառության կետ բացե՞նք:

ԱՐԾԱՎ ԵՆ ՍԿՍԵԼ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ

Հայրենի իշխանություններն ամենաբաձր «մակարդակով» շարունակում են եկեղեցու դեմ արշավը:

Թե՛ ՔՊ-ականները, թե՛ հենց Նիկոլ Փաշինյանը ամեն առիթով հայ եկեղեցին եւ հոգեւորականներին արատավորող ու նրանց թիրախավորող հայտարարություններ են անում:

Երեկ հերթը ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանինն էր, որն ԱԺ-ից մի աղմկահարույց հայտարարություն արեց. «Ես Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ եմ, եւ Հայ եկեղեցին լի է պարկեշտ մարդկանցով, բայց ի՞նչ եք դուք անում. մտնում ես եկեղեցի, մի «վեդրո» ջուր են լցնում մոմի տակ, որ մոմից էսքանը մնա, հալացնեն, մոմ սարքեն նորից վաճառեն: Տնտեսական հիմնարկ է դարձել: Գիտե՞ք՝ մոմի շահույթը ինչքան է, հարյուրապատիկ շահույթով:

Ժողովրդին էշի տեղ մի դրեք, գժի տեղ մի դրեք: Մարդիկ ամեն ինչից տեղյակ են: Բոլոր հույզերի վրա խաղացիք, Եռաբլուրի հույզի վրա էլ խաղացիք»:

«Ժողովուրդ» օրաթերթը Ալեն Սիմոնյանի այս հայտարարության վերաբերյալ դիմեց Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տնօրեն Եսայի քահանա Արթենյանին, վերջինս էլ արձագանքեց. «Ես որեւէ եկեղեցում նման բան չեմ տեսել, վստահ եմ, որ Ալեն Սիմոնյանից ավելի շատ եմ գնում եկեղեցի, բայց նման պատկեր ես երբեւէ չեմ տեսել»:

Ուշագրավ է, որ նույն Նիկոլ Փաշինյանը, որի իշխանության ներկայացուցիչները, իրար հերթ չտալով, կեղծ տեղեկություններ են տարածում եկեղեցու եւ հոգեւորականների վերաբերյալ, իշխանության գալուց հետո՝ 2018թ.-ին, Ամենայն հայոց կաթողիկոսի հետ սելֆի էին անում ու հպարտանում, որ այն պատմական է. «Սա պատմական լուսանկար է: Ինչու՞, որովհետեւ սա հայոց պատմության մեջ Ամենայն հայոց կաթողիկոսի եւ Հայաստանի ղեկավարի առաջին սելֆին է:

Վեհափառի հետ մեկնում ենք Նյու Յորք». - Վեհափառի հետ լուսանկարին կից գրել էր Նիկոլ Փաշինյանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՈՒՍԱՆՈՂԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

ՓՆՏՐՈՒՄ ԵՆ ՄԵԿ ԱՆՁԻ. Ո՞Վ Է ՆԱ

Ինչպես հայտնի է, 2024 թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում, «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջ»-ի ուսանողի 17-ամյա երիտասարդն ընկերոջ հետ գտնվել է քոլեջին հարող տարածքում գործող սննդի կետի մոտ, երբ 6-7 երիտասարդներ, այդ թվում՝ 21-ամյա երիտասարդը, վազել են ուսանողի ուղղությամբ:

Նշված անձանցից մեկի ձեռքում փայտե մահակ է եղել, իսկ 21-ամյա երիտասարդի ձեռքին՝դանակ: Երիտասարդների միջեւ կրկին վիճաբանություն է սկսվել, որի ժամանակ 21-ամյա երիտասարդը դանակով մի քանի անգամ հարվածել է 17-ամյա երիտասարդի մարմնի տարբեր հատվածներին, ինչի հետեւանքով նա վայր է ընկել, որից հետո տղաները, գետնին ընկած վիճակում, շարունակել են ոտքերով հարվածներ հասցնել երիտասարդի մարմնին, իսկ 21-ամյա երիտասարդը դանակով հարվածել է նրան: Հավաքված անձանց միջամտության արդյունքում՝ վիճաբանությունը դադարել է:

Իրավապահները հայտնաբերել են դանակահարողին եւ նրա հետ քոլեջի տարածքում տղային մահակներով ծեծի ենթարկած մյուս ենթադրյալ հանցագործներին: Դեռեւս 1,5 ամիս անց նախաքննական մարմինը հայտնել էր, որ նախաքննական մարմնի կողմից ձեռնարկված մեծածավալ միջոցառումներով պարզվել է նաեւ միջադեպի ժամանակ տուժողին մահակի գործադրմամբ մարմնական վնասվածքներ հասցրած անձի ինքնությունը, ով 21-ամյա երիտասարդի մեկ այլ ընկերն է, ում նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել եւ հայտարարվել հետախուզում:

Քննչական կոմիտեից մեզ հայտնեցին, որ վերջինս դեռ հայտնաբերված չէ ասել է, թե մահակով հարվածողին դեռ փնտրում են:

Հիշեցնենք, որ 17-ամյա երիտասարդը, ով ենթադրյալ հանցագործություն կատարած անձի հետ տեւական ժամանակ, անձնական հարցի առնչությամբ, գտնվել է թշնամական հարաբերությունների մեջ, կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքները ստացել էր սույն թվականի մարտի 12-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում՝ Երեւան քաղաքի Մամիկոնյանց 52/3 հասցեի մոտ:

Վարույթի շրջանակում ձեռնարկված քննչական անհրաժեշտ գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում՝պարզվել են քննության համար էական նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ, այդ թվում՝ միջադեպին մասնակից եւս երկու անձի ինքնություն, որոնք սպանության կասկածանքով ձերբակալված 21-ամյա երիտասարդի ընկերներն են: Քննիչների եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողների համատեղ գործողությունների արդյունքում՝ ընկերներից մեկը եւ 21-ամյա երիտասարդը հայտնաբերվել, ներկայացվել են վարույթն իրականացնող մարմնին եւ ձերբակալվել:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝21-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով եւ 297-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ վերջինիս վերոհիշյալ ընկերոջը՝ 297-րդ հոդվածի 3-րդ մասով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ 21-ամյա երիտասարդի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին, որը բավարարվել է: Վերջինիս ընկերոջ նկատմամբ կիրառվել է տնային կալանք խափանման միջոցը:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

Ժ. ՈՍԿԱՆՅԱՆԸ ՃԱՆԱՉՎԵԼ Է ՏՈՒԺՈՂ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում կատարվում է քննություն՝ մայիսի 5-ին Երեւանի ակումբներից մեկում առերեւույթ խմբային խուլիգանության եւ ինքնիրավչության դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ: Այդ մասին հայտնում են ՔԿ-ից:

2024 թ. մայիսի 5-ին ոստիկանություն հաղորդում է ստացվել այն մասին, որ նույն օրը՝ երեկոյան, Երեւան քաղաքի Թումանյան փողոցում գործող ակումբներից մեկում Մ.Բ.-ն եւ նրա սեղանակիցները վիճաբանել են լրագրող Ժիրայր Ոսկանյանի հետ, ձեռքերով անհարգալից ժեստ ցույց տվել, վերցրել հեռախոսը, որը որոշ ժամանակ անց վերադարձրել են, ինչպես նաեւ քաշքշել են նրան՝պատճառելով ֆիզիկական ցավ:

Ստացված հաղորդման առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (խմբի կազմում խուլիգանությունը) եւ 460-րդ հոդվածի 1-ին մասի (ինքնիրավչությունը) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

ԺԱՄԿԵՏԱՅԻՆՆԵՐԸ ԿԱՆԳՆԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Նորայր Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով N զորամասի զինծառայող, կրտսեր սերժանտ, ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության ժամանակ մարտական գործողությունների իրականացման վայրում, զորամասի կազմով բացազատվելուց հետո՝ պարտավոր լինելով կարգադրությամբ սահմանված համապատասխան վայրում կատարել ծառայողական առանձին պարտականություններ՝ իրականացնել պաշտպանություն, հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, այն է՝ թողել է կարգադրությամբ նախատեսված վայրը եւ վերադարձել է զորամաս: Բացի դրանից, նա, ներկայանալով զորամասի մշտական տեղակայման վայր,հանձնել է իրեն ամրակցված զենք-զինամթերքը, ապա 2020թ.-ի հոկտեմբերի 10-ին ինքնակամ թողել է զորամասը եւ միայն 2020 թ.-ի նոյեմբերի 08-ին,ներկայացել է ՀՀ ՊՆ ՌՈ Սիսիանի բաժին՝այդ կերպ զինվորական ծառայությունից ինքնակամ բացակայելով 240 ժամից ավելի տեւողությամբ:

Զավեն Օհանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ ՊՆ N զորամասի 2-րդ հրաձգային վաշտի կրակային աջակցման դասակի գնդացրորդի օգնական, շարքային, 2020թ.-ի հոկտեմբերի 9-ից 12-ն ընկած ժամանակահատվածում հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, այն է՝թողել է կարգադրությամբ նախատեսված վայրը եւ վերադարձել է ՀՀ ՊՆ N զորամաս:

Սարգիս Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, լինելով պարտադիր ժամկետային զինծառայող 2020թ.-ի հոկտեմբերի 9-ին հրաժարվել է զինվորական ծառայության առանձին պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց փաստացի դադարեցմամբ, այն է՝ թողել է կարգադրությամբ նախատեսված վայրը եւ վերադարձել ՀՀ ՊՆ N զորամաս:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«ԳՈՅ» ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Վերաքննիչ դատարանում երեկ՝ ժամը 11:00-ին, տեղի է ունեցել «Գոյ» թատրոնի գործով դատական նիստը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ է հաստատել թատրոնի ռեժիսոր Սարգիս Արզումանյանի հետ՝ մանրամասն իմանալու, թե ինչ որոշում է կայացվել դատարանում, ինչ նորություններ կան:

Մեզ հետ զրույցում Արզումանյանն ասաց, որ ունեին հստակ պահանջ, եւ նիստի ընթացքում քննվեց ու ավելի կոնկրետացավ պահանջը:

«Դատական նիստի ընթացքում, այսպես ասած, առաջնային քննվեց եւ հստակ պահանջը ավելի կոնկրետացավ. ունեինք միջնորդություն, որ պետգույքի կոմիտեին ներգրավեին՝ որպես երրորդ անձ: Դատարանը միջնորդությունը ընդունեց՝ պետգույքի ներգրավումը որպես երրորդ անձ գործում: Ընդհանուր առմամբ, այսօրվա ողջ նիստի արդյունքում քննվում եւ հստակեցվում էր առարկայի բովանդակությունը՝ ինչ պահանջ է մեր կողմից դրվում եւ, բնականաբար, պատասխանող կողմն էլ ուներ իր առարկությունները կամ հարցերը բովանդակության հետ կապված: Ընդհանուր այս էր». - ասաց Արզումանյանը:

Սարգիս Արզումանյանը մեզ նաեւ հայտնեց, որ դատական նիստը հետաձգվեց եւ հաջորդ նիստը տեղի կունենա սեպտեմբերի 19-ին:

Հետաքրքրվեցինք նաեւ, թե ինչ է կարծում Արզումանյանը, արդյո՞ք ամեն բան իրենց օգտին կլինի. ինչին ի պատասխան՝ Արզումանյանն ասաց. «Հօգուտ ո՞ւմ... Մենք միշտ ասում ենք, որ ամեն բան պետք է լինի հանդիսատեսի համար, «Գոյ» թատրոնի համար չէր կռիվը, այլ հանդիսատեսի, ու հանդիսատեսը, բնականաբար, պետք է հաղթի՝ունենալով «Գոյ» թատրոն»:

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆԸ ԺՆԵՎՈՒՄ Է

Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը Ժնեւում է՝ մասնակցելու Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) ամենամյա նիստին:

Դաշինքը հետեւում է Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գործունեության համապատասխանությանը Փարիզի սկզբունքներին, ինչպես նաեւ նպաստում է մարդու իրավունքների զարգացմանն ու պաշտպանությանը:

Մայիսի 6-ին տեղի են ունեցել Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների (APF, ENNHRI, NANHRI, RIDHCA) տարածաշրջանային ցանցերի ներկայացուցիչների եւ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների գլոբալ դաշինքի (GANHRI) Բյուրոյի հանդիպումները:

Անահիտ Մանասյանը մասնակցել է նաեւ իրավապաշտպանների եւ օմբուդսմենական հաստատությունների ղեկավարների ու ներկայացուցիչների պաշտպանության թեմային նվիրված քննարկմանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 103 դեպք, որից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽՈՒՍԱՓԵԼ Է ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԻՑ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշմամբ՝2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ հարցնելով՝Դուք ամբողջությամբ գիտակցո՞ւմ եք սահմանազատման անվան տակ, միակողմանի կերպով, Տավուշից Ադրբեջանին 4 գյուղերի տարածքների հանձնման հետեւանքները Հայաստանի, Տավուշի մարզի, սահմանագոտու բնակիչների եւ անձամբ Ձեզ համար: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, «Հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել համապատասխան պետական լիազոր մարմիններին»: Փաստորեն, մարզպետը խուսափել է պատասխանելուց՝ մինչդեռ ապրիլի 26-ին նա Կիրանց էր գնացել, որպեսզի սահմանազատման անվան տակ տարածքների միակողմանի հանձնման դեմ բողոքող կիրանցիներին համոզի, որ նրանք բացեն գյուղով ձգվող միջպետական ավտոճանապարհը: Սակայն մարզպետ Հ. Ղալումյանն այդ գործում ձախողվելով՝հեռացել էր Կիրանցից:

ՆՎԱԶԵԼ Է 142–ՈՎ

Տավուշի մարզպետարանից հայտնել են, որ ընթացիկ ուսումնական տարում՝ 2023-2024 թվականներին Տավուշի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական դպրոցներում աշակերտների թիվը 15.715 է, իսկ 2018-2019 ուսումնական մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը եղել է 15.857: Նիկոլ Փաշինյանի իշխանության 5 տարիներին նրա հայրենի՝Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը նվազել է 142-ով, կարելի է ասել՝ մարզի գյուղական 2-3 դպրոց փակվել է:

ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ

Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը ապրիլի 30-ին որոշել է բավարարել անհատ ձեռնարկատեր «Մարուսյա Հակոբյանի» դիմում-հայտը եւ տրամադրել բացօթյա առեւտուր կազմակերպելու թույլտվություն 01.05.2024-31.08.2024թթ.-ի համար: Համայնքի ղեկավարը, նույն որոշմամբ, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնին հանձնարարել է տուրքի գանձումները կատարել ըստ Դիլիջանի համայնքի ավագանու՝ 2023թ. դեկտեմբերի 1-ի թիվ 530-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի: Տուրիստական Դիլիջան քաղաքում գյուղատնտեսական մթերքների շուկա չկա, համայնքի ղեկավարը փոխանակ շուկա կառուցի, բացօթյա առեւտրի թույլտվություն է տալիս: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը 2023 թվականին Իջեւան համայնքում բացօթյա առեւտուրը կանխարգելելու համար մարզպետարանի հանձնաժողով էր ստեղծել, սակայն նա անտեսում է Դիլիջանում համայնքապետարանի կողմից օրինականացված բացօթյա առեւտուրը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՍՏԱՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել են 2023-2024 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական եւ պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման ժամկետները:

ԿԳՄՍ նախարարության տարածած ցանկում նշվում է՝

4-րդ դասարանում գիտելիքների ստուգում կանցկացվի հետեւյալ առարկաներից՝

«Մայրենի» (գրավոր, թեստ) - 07.06.2024 թ.

«Մաթեմատիկա» (գրավոր, թեստ) - 11.06.2024 թ.

Ռուսաց լեզու (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար - քննաշրջանի ընթացքում

Մայրենի լեզու եւ գրականություն (բանավոր)՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար - քննաշրջանի ընթացքում:

9-րդ դասարանում քննություններ կանցկացվեն հետեւյալ առարկաներից՝

«Հայոց լեզու» (գրավոր, թեստ) - 04.06.2024 թ.

«Մաթեմատիկա» (գրավոր, թեստ) - 10.06.2024 թ.

Բնագիտություն («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ՝ գրավոր, թեստ) - 17.06.2024 թ.

Տավուշի մարզի ուսումնական հաստատություններում՝ «Հայոց պատմություն» եւ «Գրականություն» /մեկ միասնական էսսե/-20.06.2024 թ.

«Հայոց պատմություն» (բանավոր) - քննաշրջանի ընթացքում

«Գրականություն» (բանավոր) - քննաշրջանի ընթացքում

Օտար լեզու («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», այլ լեզուներ՝սովորողի ընտրությամբ, բանավոր) - քննաշրջանի ընթացքում

«Ռուսաց լեզու» (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար - քննաշրջանի ընթացքում

«Ֆիզկուլտուրա» (ստուգարք)- քննաշրջանի ընթացքում

«Մայրենի լեզու եւ գրականություն» (բանավոր)՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար - քննաշրջանի ընթացքում:

12-րդ դասարանում պետական ավարտական քննությունները կանցկացվեն հետեւյալ առարկաներից՝

«Հայոց լեզու եւ հայ գրականություն» (գրավոր) - 06.06.2024 թ.

«Մաթեմատիկա» (գրավոր) - 12.06.2024 թ.

«Հայոց պատմություն» (գրավոր) - 19.06.2024 թ.

«Ռուսաց լեզու» (բանավոր)՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար - քննաշրջանի ընթացքում

«Մայրենի լեզու եւ գրականություն» (բանավոր)՝ ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար - քննաշրջանի ընթացքում:

«Ֆիզկուլտուրա» (ստուգարք)- քննաշրջանի ընթացքում

Պետական ավարտական քննությունների ժամանակացույց եւ աշխատակարգ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ Է ՄԵԿՆԱՐԿՈՒՄ

IDBank-ը մեկնարկում է սոցիալական աջակցության երկարաժամկետ ծրագիր, որում այս անգամ ներառվել է Արցախից բռնի տեղահանված թվով 42 բազմազավակ ընտանիքներից շուրջ 150 անչափահաս երեխա:

Մինչեւ տարեվերջ ծրագրի շահառու յուրաքանչյուր երեխայի համար IDBank-ն ամեն ամիս հատկացնելու է 40.000 դրամի չափով idplus նվեր-քարտեր, որոնցով ընտանիքները հնարավորություն կունենան գնումներ կատարել բոլոր այն վաճառակետերում, որտեղ կա «Իդրամով» վճարման հնարավորություն, իսկ դա ենթադրում է ամբողջ Հայաստանով մեկ շուրջ 21.000 վաճառակետ:

IDBank-ի հաղորդակցման բաժնի ղեկավար Տաթեւիկ Վարդեւանյանը, կարեւորելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի շարքում արցախցիներին ուղղված միջոցառումները, նշում է՝ «Քո կողքին» ծրագիրը նախորդներից առանձնանում է նրանով, որ լինելու է շարունակական ու երկարատեւ: «2020թ. պատերազմից հետո IDBank եւ Իդրամ ընկերություններն Արցախում ապրող մեր հայրենակիցների կյանքի պայմանների բարելավմանն ու կրթությանն ուղղված մի շարք ծրագրեր են իրականացրել: Ցավոք, այսօրվա ծանր իրականությունում, երբ Արցախը կորսված է, մենք մեկնարկում ենք «Քո կողքին» ծրագիրը, որն ունի բացառապես սոցիալական ուղղվածություն եւ միտված է կյանքի բարդ պայմաններում հայտնված մեր հայրենակիցների բազմաթիվ հոգսերի թեկուզ շատ փոքր մասը թեթեւացնելուն», - ասում է Տաթեւիկ Վարդեւանյանը:

Ծրագրում ներառվել են այն ընտանիքները, որոնք ունեն երեք եւ ավել երեխաներ, սոցիալապես խիստ անապահով են, ընտանիքներից շատերն էլ զոհեր ունեն: Շահառուների ցանկը ձեւավորվել է ըստ մեր ընկերությունների խմբի աշխատակիցների ներկայացրած տվյալների, որոնք մանրամասն ուսումնասիրվելուց հետո հաստատվել ու անցել են ծրագրի վերջնական փուլ: Մեզ համար կարեւոր է այս փուլում եւս, երբ աջակցության հիմնական ծրագրերը ավարտվել են, լինել բռնի տեղահանված մեր հայրենակիցների կողքին», - հավելում է Տաթեւիկ Վարդեւանյանը:

ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը տեղեկացնում է, որ 2024 թվականի մայիսի 10-ին՝ժամը 15:00-ին, տեղի կունենա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով ստեղծված մշակույթի եւ արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի նիստ:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Team Telecom

ԲԱՋՄԱԹԻՎ ԹՈՓ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝ ԱՆՍԱՀՄԱՆԱՓԱԿ

Team Telecom Armenia-ն մշակել է նոր «Բի Ֆրի» փաթեթ, որը հնարավորություն է տալիս օգտվել հիմնական վիդեո հարթակներից անսահմանափակ՝ առանց ինտերնետի սպառման: Այս առաջարկն ընգրկում է YouTube, Netflix, Snapchat, TikTok ու այլ թոփ հավելվածներ:

«Բի Ֆրի 4000» փաթեթը ստեղծելիս ընկերությունը հիմնվել է բաժանորդների վարքագծի ուսումնասիրության վրա:

Այսօր ինտերնետի սպառման գերակշիռ մասը բաժին է հասնում տեսանյութերին ու ֆիլմերին:

Team-ի այս նոր փաթեթի ներառումները կբավարարեն, որպեսզի բաժանորդը կարողանա լիարժեք օգտվել բջջային ինտերնետից եւ անսահմանափակ վայելել ամենապահանջված վիդեո հավելվածները՝ չմտածելով ինտերնետի ծավալի սպառման մասին:

Փաթեթի ամսական վճարը կազմում է 4000 դրամ: Այն նաեւ ներառում է 30 Գեգաբայթ ինտերնետ, 1000 րոպե դեպի Հայաստանի Հանրապետության բոլոր ցանցեր, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Ռուսաստանի Դաշնություն, Beeline եւ Tele2:

Փաթեթը հասանելի է եւ՛ կանխավճարային, եւ՛ հետվճարային հաշվարկման համակարգերում: Այն ակտիվացնել հնարավոր է My Team հավելվածի միջոցով կամ *706# հրահանգով: Հավելյալ տեղեկություն կարող եք ստանալ այստեղից:

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն (ապրանքանիշը՝ Team Telecom Armenia) հայկական ընկերություն է, որը առաջատար դիրք է զբաղեցնում երկրի հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Հանդիսանալով Հայաստանում առաջին տելեկոմ ցանցի ժառանգորդը՝ ընկերությունը ունի ոլորտում ծառայությունների մատուցման ավելի քան 100 տարվա պատմություն:

Team-ը տրամադրում է բջջային եւ ֆիքսված ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ թե՛ անհատ, թե՛ կորպորատիվ բաժանորդներին:

Հայաստանի բոլոր բնակիչներին բարձրորակ հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումը Team Telecom Armenia-ի նպատակն է:

Դրան հասնելու համար ընկերությունն անընդհատ արդիականացնում ու վերազինում է բջջային եւ ֆիքսված ցանցերը՝ գործարկում նոր միջազգային կապուղիներ, որոնք նաեւ բարձրացնում են Հայաստանում ինտերնետի հուսալիության եւ անվտանգության մակարդակը:

ԿԻԲԵՐԳՐՈՒՆԵՐ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ LockBit-Ի ԲԻԼԴԵՐԸ

«Չարագործները» LockBit 3.0 ծածկագրող ծրագրի բիլդերի՝ (builder) 2022-ին արտահոսած տարբերակը շարունակում են օգտագործել վնասաբեր ծրագրի սեփական մոդիֆիկացիաներ ստեղծելու համար: 2024-ին «Կասպերսկի» ընկերության փորձագետները շաս երկրներում բախվել են նման տարբերակների օգտագործման հետ: Ամենայն հավանականությամբ, այդ գրոհները փոխկապակցված չեն եւ իրականացվել են տարբեր խմբերի կողմից: ԱՊՀ երկրներում գրոհների համար արտահոսած բիլդերը կարող էին օգտագործել նաեւ LockBit խմբի մրցակիցները:

Ընկերությունը հայտնում է, որ ցանցով տարածման եւ պաշտպանության շրջանցման գործառույթները, որոնք կարելի է կարգավորել բիլդերում, բարձրացնում են գրոհների արդյունավետությունը, հատկապես, եթե չարագործներն արդեն ունեն արտոնյալ օգտահաշվի տվյալներ թիրախային ենթակառուցվածքում: Այսպես, միջադեպերից մեկի ժամանակ օգտագործվել է LockBit-ի մի նմուշ, որի իմպերսոնացիայի եւ ցանցով տարածման գործառույթները նախկինում չէին հանդիպել: Քանի որ գրոհողները տիրացել էին համակարգի ադմինիստրատորի հաշվի տվյալներին, նրանք կարողացել էին ստանալ հասանելիություն կորպորատիվ ենթակառուցվածքի առավել կրիտիկական հատվածներին:

Ծածկագրիչի այս տարբերակը գողացված հաշվի տվյալների միջոցով կարող էր ինքնուրույն տարածվել ցանցով եւ կատարել այնպիսի վնասաբեր գործողություններ, ինչպիսիք են Windows Defender-ի անջատումը, ընդհանուր ցանցային ռեսուրսների ծածկագրումը եւ Windows-ի իրադարձությունների լոգերի ջնջումը՝ հետքերը թաքցնելու համար:

Բիլդերը «չարագործներին» նաեւ թույլ է տալիս ընտրել, թե որ ֆայլերն ու կատալոգները պետք չէ ծածկագրել: Եթե գրոհողները լավ գիտեն թիրախային ենթակառուցվածքը, նրանք կարող են ստեղծել վնասաբեր ծրագիր օբյեկտի կոնկրետ ցանցային ճարտարապետության համար՝ նշելով կարեւոր ֆայլերը, ադմինիստրատորների հաշիվները եւ հիմնական համակարգերը:

Վնասաբեր ծրագիրը կարելի է կարգավորել միայն որոշակի ֆայլեր, օրինակ՝ xlsx եւ .docx բոլոր ֆայլերը, կամ որոշակի համակարգեր վարակելու համար:

«Ամենից հաճախ գրոհողներն օգտագործում են արտահոսած բիլդերի գերազանցապես ստանդարտ կամ փոքր-ինչ փոփոխված կոնֆիգուրացիան, սակայն չի բացառվում, որ ապագայում հնարավոր են նաեւ այնպիսի միջադեպեր, երբ վնասաբեր ծրագիրը կարող է ադմինիստրատորի անունից գործողություններ կատարել եւ տարածվել ցանցով:

Ռուսաստանում LockBit ծածկագրիչը հաճախ օգտագործվում է այն գրոհների ժամանակ, որոնց նպատակն է տվյալներն ամբողջությամբ ոչնչացնելը, այլ ոչ թե փրկագին ստանալը: Այս սպառնալիքը կարող է կործանարար հետեւանքներ ունենալ ընկերությունների համար»,- մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության Համակարգչային միջադեպերին արձագանքման գլոբալ թիմի ղեկավար Կոնստանտին Սապրոնովը:

Ծածկագրող ծրագրերից պաշտպանվելու համար «Կասպերսկի»-ի փորձագետներն ընկերություններին խորհուրդ են տալիս.

Ժամանակին տեղադրել ԾԱ-ի թարմացումները բոլոր համակարգերում

կիրառել կարեւոր ռեսուրսներին հասանելիության բազմագործոն նույնականացում

ստեղծել կրիտիկական տվյալների պահուստային կրկնօրինակներ

անջատել չօգտագործվող ծառայություններն ու հանգույցները՝ գրոհի մակերեսը նվազագույնի հասցնելու համար

կանոնավոր կերպով իրականացնել ներթափանցման թեստեր եւ խոցելիությունների մոնիտորինգ՝ թույլ տեղերը բացահայտելու եւ հակազդեցության արդյունավետ միջոցները ժամանակին կիրառելու համար

կանոնավոր կերպով անցկացնել կիբերանվտանգության թրեյնինգներ, որպեսզի աշխատակիցներն իմանան հնարավոր կիբրսպառնալիքների եւ դրանցից խուսափելու եղանակների մասին

օգտագործել հուսալի պաշտպանական լուծում, ինչպիսին է Kaspersky Security-ն բիզնեսի համար, ինչպես նաեւ Managed Detection and Response (MDR) ծառայությունը՝ սպառնալիքների պրոակտիվ մոնիտորինգի համար:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Fastex

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Fastex-ի մասնագետները շարունակում են ակտիվ մասնակցել միջազգային առաջատար տեխնոլոգիական միջոցառումներին, այդ թվում՝ ապրիլի 9-11-ը Փարիզում կայացած Paris Blockchain Week-ին եւ ապրիլի 18-19-ը Դուբայում կայացած Token 2049-ին:

TOKEN2049-ը միջազգային կոնֆերանսների շարք է, որն ամեն տարի կրիպտո էկոհամակարգի առաջատարներին միավորում է Սինգապուրում եւ Դուբայում՝ առաջարկելով քննարկել եւ փոխանակել գաղափարներ, զարգացնել համայնքը եւ կրիպտո ոլորտը:

Բոլոր միջոցառումների ընթացքում Fastex-ը հասցրել է մեծ ուշադրություն գրավել ինչպես նոր թողարկված, այնպես էլ արդեն հայտնի պրոդուկտներին՝Fastex Card-ին, Fastex Exchange-ին, Fastex Wallet-ին, ftNFT հարթակին, AKNEYE-ին, էկոհամակարգի նախընտրելի Bahamut բլոկչեյնին, որի PoSA կոնսենսուս ալգորիթմը ներկայացվել եւ բարձր գնահատականի է արժանացել Big Data and Privacy Computing 2024 միջազգային համաժողովին:

«Ֆասթեքսը պարբերաբար հանդես է գալիս նոր առաջարկներով եւ լուծումներով: Իսկ բոլոր նրանց համար, ովքեր իրենց առաջին քայլերն են անում Web3-ում, Bahamut Grants-ը առաջարկում է ֆինանսավորման ծրագիր, որը մեծապես նպաստում է բլոկչեյն տիրույթում նոր ապակենտրոնացված հավելվածների ստեղծմանն ու զարգացմանը», - նշել է Բահամուտ բլոկչեյն ծրագրի ղեկավար Պավել Արամյանը:

Փարիզյան երեք հագեցած օրերի ընթացքում Fastex-ի իրավաբանական գծով տնօրեն եւ տնօրենների խորհրդի անդամ Վարդան Խաչատրյանը մասնակցել է «Ընթացիկ հակասությունները եւ դրանց ազդեցությունը բլոկչեյն քաղաքականության վրա» եւ «Էթիկական նկատառումները եւ սոցիալական հետեւանքները բլոկչեյնում» թեմաներով պանելային քննարկումներին՝ կիսվելով բլոկչեյն ոլորտի կարգավորումների վերաբերյալ իր տեսակետով:

Իսկ արդեն Դուբայում կայացած Token 2049-ի շրջանակում Fastex-ը կազմակերպել է նաեւ տեղեկատվական հանդիպումների շարք ftNFT ֆիջիթալ սփեյսում՝ներկայացնելով Fastex էկոհամակարգի նախընտրելի բլոկչեյնի՝Բահամուտի տեխնիկական մի շարք առանձնահատկությունները: Հանդիպման ընթացքում «Ֆասթեքսի» ներկայացուցիչները եւ Բահամուտ բլոկչեյն ծրագրի ղեկավարը մասնակցել են թեմատիկ քննարկումների, անդրադարձել Fastex-ի դրամաշնորհային ծրագրին, խոսել կրիպտո աշխարհի օրենսդրական կարգավորումներից եւ Web3 ոլորտի այլ թեմաներից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ»

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ԵԼՈՒՅԹ՝ ՈՒՋԱՆՈՒՄ

«Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի դասանի երաժիշտներն այցելել են Արագածոտնի մարզի Ուջանի երաժշտական դպրոց եւ դպրոցի սաների հետ հանդես եկել համերգով, որի ընթացքում բոլորը փայլել են իրենց տաղանդով եւ գեղեցիկ ելույթներով:

Երիտասարդ երաժիշտներին հնարավորություն է տրվում արտահայտել դասական երաժշտության հանդեպ իրենց սերը, կատարելագործել երաժշտական հմտությունները, ձեռք բերել նոր հեռանկարներ եւ նոր ընկերական հարաբերություններ:

«Համախմբելով նույն երազանքներով եւ ձգտումներով ապրող պատանի տաղանդավոր երաժիշտների տարբեր տարածաշրջաններից՝ հիմնադրամը խթանում է Հայաստանի մարզերի հասակակից երեխաների շփումը, սերունդների միջեւ փոխադարձ կապն ու մշակույթի արժեւորումը՝ սերմանելով միասնության զգացում:

Այցին ներկա էին նաեւ «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի հիմնադիր եւ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Սերգեյ Սմբատյանը եւ Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը, որոնք եկել էին ոգեւորելու հայ շնորհալի պատանիներին: Մշտապես լինելով հիմնադրամի ու երեխաների կողքին՝ նրանք իրենց աջակցությամբ նպաստում են նրանց լուսավոր եւ հաջողակ ապագայի կերտմանն ու երազանքների իրագործմանը:

«Այսօր շատ կարեւոր իրադարձություն տեղի ունեցավ Ուջանի երաժշտական դպրոցի սաների համար: Մենք տեսանք, որ «Դասականը միավորում է» խորագրով միջոցառմանը միավորվեցին պատանի սերնդի շատ տաղանդավոր երեխաներ, նվագեցին դասական երաժշտության գեղեցիկ ստեղծագործություններ, անցկացրին հետաքրքիր ձեւաչափով խաղ-մրցույթ եւ շփվեցին շատ ջերմ ու ընկերական մթնոլորտում: Հիմնադրամի երեխաները, որոնք երաժշտության ոլորտում արդեն ունեն հաջողություններ, տաղանդ, եկան եւ իրենց փորձով կիսվեցին Ուջանի երաժշտական դպրոցի աշակերտների հետ, ինչը շատ մոտիվացնող է այստեղի երեխաների համար»,-նշել է Հայաստանի բանկերի միության նախագահ Դանիել Ազատյանը:

Ուջանում պատանի երաժիշտները ծաղիկներ են խոնարհել հայ ժողովրդի ազգային հերոս, ազգային-ազատագրական շարժման գործիչ, զորավար Անդրանիկ Օզանյանի հուշարձանին՝ չմոռանալով, թե ով ենք մենք ու ովքեր են մեր հերոսները:

«Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամը ստեղծվել է 2019 թվականին՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի նախաձեռնությամբ, որը հիմնադրամի ՀԽ նախագահն է: Հիմնադրամն իր եզակի դերն ու կարեւոր ներդրումն ունի Հայաստանի պատանի սերնդի երաժշտական կրթության եւ զարգացման մեջ եւ արդեն հինգ տարի է իրականացնում է կրթական ծրագրեր՝ աջակցելով հայ տաղանդավոր պատանի երաժիշտներին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՇՈՒՇԻ

ԲԱՐՁՈՒՆՔ, ՈՐՆ ԱՄԵՆԱՄՈՏՆ Է ԱՍՏԾՈՒՆ

Երկու օրից մայիսի 9 է. երբեմնի եռատոնը, որը մի օր անդայման կվերադառնա մեր իրականություն:

Մայիսի 9-ը հայ իրականության ամենազարմանալի օրերից մեկն է, հենց այդ օրն է Սովետական միությունը հաղթել Հայրենական պատերազմում, որին ակտիվորեն մասնակցել են հայերը՝ տարբեր ճակատներում մարտնչելով ավելի քան 600 հազար հայորդիներով, ազատագրվել է բերդաքաղաք Շուշին, որն էլ իր տրամաբանական ավարտին է մոտեցրել Արցախյան առաջին պատերազմը, քանի որ, ով տիրում էր բերդաքաղաքին, հսկում էր Արցախ աշխարհը, եւ մայիսի 9-ին է հիմնադրվել Արցախի պաշտպանության բանակը, որն ավելի քան 30 տարի կյանք ու մահի կռիվ է տվել հանուն հայրենիքի:

Մայիսի 9-ին ընդառաջ «Ժողովուրդ» օրաթերթը Ձեզ է ներկայացնում արցախյան խոսվածքով գեղեցիկ երգ՝ նվիրված Շուշիին՝ հայ իրականության ամենահեքիաթային, ամենաաստվածային եւ ամենաշքեղ քաղաքներից մեկին, որտեղ աշխարհի ամենաբարձր կետն է: Կետը, որտեղ ամենամոտն ես Աստծուն...

«Շուշվա կեղը» (Շուշիի գյուղը)

Շուշվա կեղը լոխ բաղ ա,
Ձմեր լիգը ղայմաղ ա,
Ունքա մեջդ պեց ըրա,
Քանի իմ ջանը սաղ ա:
Շուշվա բաղերին թոթը,
Ծռերի տակին խոտը,
Ծառ էլ ինի, ծաղիկ էլ,
Օրիշ ա յարիս հոտը:
Աշունք ա, պտղաքաղ ա,
Օրախություն, ծիծաղ ա,
Եկ մեր բաղը հավուղ կեր,
Ձանս ջանիդ մատաղ ա:
Պռշներիդ էտ պաչը,
Կառնի մահին առաջը,
Ես մենակ քեզ ում սյուրում,
Սոտ չում ասում էն խաչը:
Ղազանչեցոց մեծ ժամը,
Ծեռքեդ վռաղած շամը,
Խելքս կլխաս տանմ ա,
Մեշկիդ տասներկու ծամը:
Մունք էրկուսս մին վղա,
Սարերը սյարին տեղ ա,
Ուրուր սիրինք ամեն օր,
Քանի ջնրնիս սաղ ա:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ 32–ՐԴՆ Է

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակել է ֆուտզալի ազգային հավաքականների վարկանիշային աղյուսակը:

Ֆուտզալի Հայաստանի հավաքականը դասակարգման աղյուսակում զբաղեցնում է 32-րդ տեղը: Վարկանիշը գլխավորում է Բրազիլիայի հավաքականը: Երկրորդ տեղում Պորտուգալիան է, Իսպանիան երրորդն է:

Լավագույն տասնյակում են Իրանի, Արգենտինայի, Մարոկկոյի, Ռուսաստանի, Ղազախստանի, Թաիլանդի եւ Ֆրանսիայի հավաքականները:

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՀԵՐԹԱԿԱՆ ՏՈՒՐԸ

Երեկ՝ մայիսի 7-ին, մեկնարկել են Հայաստանի Պրեմիեր լիգայի հերթական՝ 33-րդ տուրի հանդիպումները: «Վեստ Արմենիան» կխաղա «Ուրարտուի», «Արարատ Արմենիան»՝ «ԲԿՄԱ»-ի հետ: Առաջին հանդիպումը մեկնարկել է 16:00-ին, երկրորդը՝ 19:00-ին: Նշենք, որ Հայաստանի առաջնության մրցաշարային աղյուսակում այս պահի դրությամբ «Արարատ Արմենիան» երրորդն է, «Ուրարտուն»՝ 4-րդը, «Վեստ Արմենիան»՝ 7-րդը, իսկ «ԲԿՄԱ»-ն եզրափակում է մրցաշարային աղյուսակը՝ վաստակած 26 միավորով:

ԽԱՅՏԱՌԱԿ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Անգլիայի Պրեմիեր լիգայի առաջնության 36-րդ տուրում «Մանչեսթեր Յունայթեդը» Լոնդոնում մրցեց «Քրիսթալ Փելասի» հետ եւ պարտություն կրեց 0:4 հաշվով: Դուբլի հեղինակ դարձավ ֆրանսիացի կիսապաշտպան Մայքլ Օլիսեն: Աչքի ընկան նաեւ ֆրանսիացի հարձակվող Ժան-Ֆիլիպ Մատետան եւ անգլիացի պաշտպան Թայրիկ Միթչելը: 35 խաղից հետո «Մանչեսթեր Յունայթեդը» 54 միավորով 8-րդն է: Նույնքան միավոր ունի 7-րդ տեղում գտնվող «Չելսին», որը նույնպես 35 հանդիպում է անցկացրել: «Քրիսթալ Փելասը» (36 խաղ) 14-րդն է՝ 43 միավոր:

Անգլիայի առաջնություն, 36-րդ տուր

«Քրիսթալ Փելաս» - «Մանչեսթեր Յունայթեդ»՝ 4:0

Մայքլ Օլիսե, 12, 66, Ժան-Ֆիլիպ Մատետա, 40, Թայրիկ Միթչել, 58

«ԲԱՅԵՐԸ» ԿՐԿՆԵՑ ՌԵԿՈՐԴԸ

Գերմանիայի նորընծա չեմպիոն Լեւերկուզենի «Բայերը» կրկնել է պորտուգալական «Բենֆիկայի» ռեկորդը (1963-1965 թվականներին) եվրոպական ֆուտբոլում անընդմեջ անպարտելի հանդիպումների քանակով: Գերմանիայի առաջնության 32-րդ տուրում «Բայերը» 5:1 հաշվով հաղթել է Ֆրանկֆուրտի «Այնտրախտին»: Իսպանացի խաբի Ալոնսոյի գլխավորած թիմը պարտություն չի կրել 48 խաղում անընդմեջ:

«Բայերը» Բունդեսլիգայում վաստակել է 84 միավոր:

● *Մայիսի 8-ին՝ ժամը 21:00-ին, Բաբելոն թատրոնում կբեմադրվի «Կալիգուլա» ներկայացումը՝ հիմնված իրական փաստերի վրա: Տոմսերի արժեքը՝ 5000 եւ 7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ստանալ խաղատան կազմակերպման լիցենզիա:

Արտակ Համբարձումյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Խաղատան կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի՝ ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1164-Ն որոշման համաձայն: Խաղատան կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ՝ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով)՝ վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայտատուները խաղատան կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում հայտը եւ փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ՄԻԳՐԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ապաստան հայցողների մասին տեղեկությունը գաղտնի՞ է:

Աննա Գալստյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողների հայտնած տեղեկությունները գաղտնի են: Դրանք չեն հաղորդվում իրենց երկրների իշխանություններին՝ ներառյալ դեսպանատներին կամ որեւէ այլ անձի: Այդ տեղեկությունները այլ անձանց կարող են տրամադրվել միայն ապաստան հայցողի գրավոր համաձայնության դեպքում: Հարցազրույցի գաղտնիությունը երաշխավորված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով:

«Փախստականների եւ ապաստանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ապաստանի շնորհումը պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, եւ սույն օրենքի կամ ապաստանի եւ փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որեւէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի
եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետական մարմնի կողմից տեղեկատվության փոխանցումը զանգվածային լրատվական միջոցներին միջնորդավորված կերպով հանգեցնում է վերը նշված օրենքի խախտմանը, ուստի նման ցանկացած հայտ մերժվում է Միգրացիոն ծառայության կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Լույս է ընծայվել մատենադարանի ավագ գիտաշխատող Հայկ Համբարձումյանի՝ «Հացն ու Գինին. որսը, խնջույքն ու սննդային կոդերը «Սասնա ծռեր» էպոսում եւ հայ միջնադարյան գրականության մեջ» մենագրությունը: Այն շուրջ հինգ տարիների ուսումնասիրության արդյունք է՝ նվիրված մեր էպոսի ու միջնադարյան գրականության սննդային կամ խորհրդային կոդերին, կերակուրների կիրառությանը, նշանակությանը, կենցաղային, ծիսական ու նույնիսկ հոգեւոր խորհուրդներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 1 + 5	+10 + 15
Կոտայքի լեռներ	+ 1 + 3	+10 + 12
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8	+14 + 16
Գեղարքունիք	+ 2 + 5	+10 + 12
Լոռի	+ 3 + 6	+13 + 16
Տավուշ	+ 6 + 9	+15 + 19
Արագածոտնի լեռներ	0 + 4	+10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 6 + 9	+15 + 19
Արարատ	+10 + 12	+21 + 23
Արմավիր	+ 9 + 11	+21 + 23
Վայոց ձորի լեռներ	0 + 2	+ 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 10	+20 + 22
Սյունիքի հովիտներ	+ 8 + 11	+16 + 20
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 12	+14 + 17
ԼՂՀ	+ 7 + 10	+14 + 16
Երեւան	+ 16 + 19	+ 20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*